

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ

ԿԱՆՈՆՆԵՐ

Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն

Հաստատվել է Ընկերության խորհրդի
կողմից 2008թ.-ի մարտի 3-ին
(արձանագրություն թիվ 2)

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Գործադիր տնօրեն՝
Լևոն Ալթունյան

ԵՐԵՎԱՆ
2008

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույնով ընկերությունը համաձայն է Պլանում սահմանված կարգով Ապահովագրվողին հատուցել բոլոր այն գումարները, որոնց վճարման համար Ապահովագրվողը կարող է կրել իրավական պատասխանատվություն՝ որպես վնաս (ներառյալ՝ հայցվորի ծախսերը և ծախսերը) մարմնական վնասվածքի կամ հիվանդության, կամ որևէ նյութական ունեցվածքի պատահական կորստի կամ հասցված վնասի առնչությամբ, որը ծագել է Ապահովագրվողի Պլանում նշված Գործունեության հետ կապված և որն առաջացել է Հետադարձ գործողության ամսաթվից հետո և որի կապակցությամբ Ծրագրում նշված Ապահովագրության ժամանակահատվածի ընթացքում առաջին անգամ Ապահովագրվողի դեմ ներկայացվել է հատուցման պահանջ:

Սույն ապահովագրությունը ներառում է նաև ստորև թվարկված պատասխանատվությունը.

1. որն առաջանում է Ապահովագրվողի կողմից սննդի, բժշկական կամ սոցիալական ծառայություններ տրամադրելու հետևանքով
2. որը հանդիսանում է Ապահովագրվողի սպորտային կամ հասարակական ակունքների, կոմիտեների, ներառյալ այդ ակունքների՝ որպես Ապահովագրվող դիտարկվող աշխատողների և/կամ անդամների համատեղ կամ առանձին պատասխանատվությունը
3. որը հանդիսանում է Ապահովագրվողի տնօրենների և/կամ պաշտոնատար անձանց՝ որպես մասնավոր անհատի պատասխանատվություն, որը ծագում է նրանց համար Ապահովագրվողի աշխատակիցների կողմից կատարած աշխատանքներից:

Սույնով տրամադրված Ապահովագրությունը կիրառվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կրած մարմնական վնասվածքի կամ հիվանդության, կամ նյութական ունեցվածքի կորստի կամ վնասի համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

- i. Սույնով ընկերությունը և Ապահովագրվողը համաձայնվում են, որ սույն Ապահովագրական պայմանագրի շրջանակներում տրամադրվող ապահովագրության համար հիմք է հանդիսանում միայն Հայաստանի Հանրապետության Առաջին Ատյանի Ղատարանի կողմից Ապահովագրվողի նկատմամբ կայացրած որոշումը. հատուցման համար հիմք չեն կարող ծառայել այլ մարմինների որոշումները, կամ երկկողմ կամ այլ տեսակի համաձայնագրերի հիման վրա՝ այլ երկրների դատական որոշումների կիրարկման նպատակով վերը նշված դատարանների վճիռները կամ հրամանները:
- ii. Սույն ապահովագրության համար ապահովագրավճարը հաշվարկվում է ըստ ՀՀ օրենսդրության՝ առանց հաշվի առնելու այլ օրենսդրությամբ կամ դատարանների որոշումներով պահանջվող վճարվելիք գումարների չափերը:

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Ապահովագրությունը չի ներառում պատասխանատվություն.

1. որևէ անձի կողմից կրած մարմնական վնասվածքի կամ հիվանդության համար, որը ծագել է Ապահովագրվողի մոտ նրա աշխատանքի պատճառով կամ ընթացքում, կամ որևէ անձին հասցրած մարմնական վնասվածքի կամ հիվանդության համար, որը ծագել է Ապահովագրվողի հետ բացառապես աշխատանքի տրամադրման մասին կնքած պայմանագրի շրջանակներում նրա աշխատանքի կամ մասնակցության պատճառով կամ ընթացքում
2. Ապահովագրվողի սեփականությունը հանդիսացող կամ նրա խնամքին, պահառությանը և վերահսկողությանը հանձնված գույքի /ներառյալ կապալառուների և ենթակապալառուների գործարանը և սարքավորումը/ կորստի կամ վնասի համար, բացառությամբ
 - ա) աշխատակիցների գույքը
 - բ) գործունեության տարածքը /ներառյալ շենքերն ու շինությունները/, որը չի հանդիսանում Ապահովագրվողի սեփականությունը կամ վարձակալված չէ նրա կողմից, այլ

ժամանակավորապես զբաղեցվել է աշխատանքներ իրականացնելու նպատակով, սակայն որևիցե հատուցում չի տրամադրվում այդտեղ տեղադրված գույքի կորստի կամ վնասի համար, որի վրա աշխատում է Ապահովագրվողը և որը ծագել է այդ աշխատանքի արդյունքում.

3. ա) Ապահովագրվողի կողմից կամ անունից մեխանիկական կցասայլի կամ կիսակցասայլի տնօրինման կամ շահագործման պատճառով առաջացած պատասխանատվությունը, որի ապահովագրությունը պահանջվում է օրենսդրոգրեմ, կամ ավտոտրանսպորտի ապահովագրական պայմանագրով սահմանված դեպքերում
բ) Ապահովագրվողի կողմից, կամ նրա անունից ցանկացած տիպի ջրային, օդային կամ երկաթուղային փոխադրամիջոցի սեփականության կամ շահագործման պատճառով առաջացած պատասխանատվությունը.
4. վնասների կանխագնահատման, տույժերի և աշխատանքի իրականացման պայմաններից բխող պատասխանատվությունը, եթե ապացուցված չէ, որ այդ պայմանների բացակայության դեպքում նույնպես կառաջանար նման պատասխանատվություն Ապահովագրվողի կողմից արտադրված, նախագծված, վաճառված, մատակարարված, վերանորոգված կամ տեղադրված գույքին,
5. կառույցին կամ պայմանագրային աշխատանքներին /ներառյալ դրանցում օգտագործված նյութերին/ պատճառած կորստից կամ վնասից ծագած պատասխանատվությունը՝

ա) նախքան Ապահովագրվողի կողմից դրանց ավարտման հավաստումը կամ հանձնումը

բ) Ապահովագրվողի կողմից դրանց ավարտի հավաստումից կամ հանձնումից հետո, եթե կորուստը կամ վնասը առաջացել է այդ գույքի, կառույցի կամ պայմանագրային աշխատանքների որևէ մասի թերություններից.

6. պայմանագրի իրականացման անխուսափելի և անկանխելի հետևանք հանդիսացող պատասխանատվությունը
7. ստորգետնյա աշխատանքներին հասցված վնասի համար պատասխանատվությունը, եթե Ապահովագրվողը՝ նախքան որևէ աշխատանք սկսելը, ստորգետնյա աշխատանքների վայրը պարզելու համար չի կատարել գրավոր հարցում համապատասխան պետական մարմնին և հնարավորության դեպքում չի ստացել գրավոր պատասխան
8. մթնոլորտի, ջրային կամ ցամաքային տարածքների, կամ այլ նյութական ունեցվածքի աղտոտումից կամ վարակումից առաջացած պատասխանատվությունը
9. Մասնագիտական Ծառայությունների՝ անվճար կամ այլ կերպ մատուցման ընթացքում Ապահովագրվողի կողմից կամ նրա անունից փաստացի կամ ենթադրաբար գործած զանցանքի, սխալի կամ բացթողման պատճառով ծագած պատասխանատվությունը:

Սույն բացառության սահմաններում Մասնագիտական Ծառայությունները նշանակում են.

1) խորհրդատվություն, նախագծում, վերահսկում, ստուգում, փորձարկում, հետազոտում, հսկում, պլանավորում և/կամ ուսումնասիրություն, ինչպես նաև քարտեզների, հատակագծերի, կարծիքների, զեկույցների, գնահատականների, նախահաշվի, աուդիտի, հարցումների, նախագծերի, չափումների, նկարների, աղյուսակների, տվյալների և/կամ բանաձևերի կազմում, հաստատում կամ մեկնաբանում, ինչպես նաև ֆինանսական միջոցների և/կամ ապահովագրության ձեռքբերում, կազմակերպում և/կամ պահպանում

2) մասնագիտական ծառայությունները, որոնք մատուցվում են համապատասխան որակավորում ունեցող անձանց կողմից, կամ այն աշխատանքները, որոնք սովորաբար իրականացվում են այն մարդկանց կողմից, որոնք ունեն իրավաբանական, նախագծման, ճարտարապետական,

ինժեներական, հետազոտական, շինարարության վերահսկման, բնապահպանական իրավիճակի գնահատման կամ աուդիտի, երկրաբանական աշխատանքների և/կամ ծրագրերի կառավարման որակավորում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Ապահովագրությունը չի ներառում պատասխանատվություն.

1. այն հատուցման պահանջի համար, որը ծագում է հետևյալի կապակցությամբ.
 - ա) Ապահովագրվողի անմիջական աշխատակցի կողմից իրականացված ցանկացած տիպի ապամոնտաժման աշխատանքները, բացառությամբ այնպիսի ապամոնտաժման, որը կատարվում է միայն ձեռքի գործիքներով և 5 մետր բարձրությունը չզերազանցող շինությունների վրա, երբ այդպիսի աշխատանքը հանդիսանում է Ապահովագրվողի կողմից շինությունների փոփոխման կամ վերանորոգման պայմանագրի լրացուցիչ մաս
 - բ) այնպիսի շինությունների փոփոխությունը կամ վերանորոգումը, ինչպիսիք են կամուրջները, աշտարակները, ուղղահայաց ծխնելույզները, դոմնային վառարանները, վիադուկները կամ հանքերը
 - գ) հանքափորեր, թունելներ կամ հորատանցքեր փորելը
 - դ) ցանկացած նպատակներով պայթուցիկ նյութերի օգտագործումը
 - ե) 3 մետրից խորը հողափորումը
 - զ) 15 մետրից բարձր աշխատանքների կատարումը
 - է) ասբեստի կամ ազբեստ պարունակող նյութի գործածությունը կամ հանքահանումը
2. ա) որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է պատերազմի, արտաքին թշնամու ներխուժման, թշնամական ուժերի, ռազմական գործողությունների /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, խռովության, զինվորական հեղաշրջման, իշխանության բռնազավթման, գույքի բռնազանձման, պետականացման կամ բռնատիրացման հետևանքով կամ ընթացքում
բ) որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հետևանք է`
 - i. միջուկային վառելիքից կամ միջուկային վառելիքի այրումից ծագած իոնացված ճառագայթման կամ ռադիոակտիվ աղտոտման
 - ii. ռադիոկատիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր հատկություններ ունեցող պայթուցիկ միջուկային բաղադրիչի.
3. որն առաջանում է Ապահովագրվողի կամ նրա մոտ դեկավար կամ վերահսկիչ պաշտոն զբաղեցնող աշխատակցի կողմից կանխանտաժված կամ դիտավորյալ պատճառած մարմնական վնասվածքի, հիվանդության կամ նյութական ունեցվածքի կորստի հետևանքով
4. որն առաջացել է նախքան սույն Ապահովագրական պայմանագրի ուժի մետ մտնելը Ապահովագրվողի կողմից որևէ հանգամանքի կամ դեպքի մասին տեղեկացվածության պատճառով ծագած հատուցման պահանջի հետևանքով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ընկերությունը կվճարի նաև ՀՀ դատարաններում իրականացված դատական վարույթների հետ կապված ծախսերը` նրանց գրավոր համաձայնությամբ`
(ա) սպանությունների և բռնությունների դեպքերի հետաքննության կամ մահացու դժբախտ պատահարների հետաքննության ժամանակ վկա հանդես գալու համար

(բ) պարզեցված կարգով վարույթի դատարանում սույն Ապահովագրական պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա անգործության հետևանքով առաջացած վարույթը պաշտպանելու համար:

2. Տնօրեններին վերաբերող դրույթներ
Ապահովագրվողի պահանջով, Ընկերությունը համաձայնում է հատուցել Ապահովագրվողի Տնօրենին, սակայն միայն այնքանով, որքանով այդ պարտավորությունը ծագում է Տնօրենի համար Ապահովագրվողի կողմից կամ նրա անունից կատարված աշխատանքից: Նշված Տնօրենը ենթակա է և պետք է հետևի այստեղ սահմանված կարգին և պայմաններին, և սույն դրույթը չի կարող հիմք հանդիսանալ Ծրագրում նշված Հատուցման սահմանաչափի մեծացման համար:
3. Չփոխհատուցվող գումարին վերաբերող դրույթ
Երբ չփոխհատուցվող գումարը նշվում է ուցակում, Ապահովագրվողը պատասխանատվություն է կրում ծագող պատահարի պատճառով առաջացած յուրաքանչյուր և ամեն հայցի կամ հայցերի շարքի առաջին գումարի չափով:
4. Համատեղ պատասխանատվության մասին դրույթ
Սույնով սահմանվում է, որ այն դեպքերում, երբ Պլանում որպես Ապահովագրվող նշված են մեկից ավելի կողմեր, ապա յուրաքանչյուր կողմի համար ծածկույթը կիրառվում է որպես անհատ ապահովագրվածի, եթե Ընկերության ընդհանուր պարտավորությունը չի գերազանցում Պլանում նշված Հատուցման սահմանաչափը:
5. Հատուցման սահմանաչափը
Սույն Ապահովագրության շրջանակներում, Ապահովագրվողի դեմ որևէ սկզբնաղբյուրից բխող մեկ կամ մի շարք դեպքերի կապակցությամբ կամ դրանցից ծագած բոլոր հատուցման պահանջների համար Ընկերության պատասխանատվությունը չպետք է գերազանցի Պլանում սահմանված Հատուցման սահմանաչափը, սակայն Ընկերությունը՝ Ապահովագրվողի կողմից որևէ հատուցման պահանջի վիճարկման և վերջինիս կողմից պահանջի և գրավոր համաձայնության դեպքում, կփոխհատուցի նաև դրա հետ կապված բոլոր ծախսերը և վճարները, հաշվի առնելով հետևյալ պայմանը.

Եթե հատուցման պահանջի բավարարման նպատակով անհրաժեշտ է կատարել Ծրագրում սահմանված Հատուցման սահմանաչափը գերազանցող վճար, ապա դրա հետ կապված բոլոր ծախսերի և վճարների փոխհատուցման Ապահովագրողների պատասխանատվությունը պետք է սահմանափակվի հատուցման պահանջի բավարարման համար Հատուցման սահմանաչափով թույլատրված գումարի չափով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Նախնական պայման է հադիսանում այն, որ եթե այս ապահովագրության Ապահովագրական պարզանքից որևէ մեկը հաշվարկվել է Ապահովագրվողի կողմից ներկայացված գնահատականների համաձայն, Ապահովագրվողը պետք է զգուշությամբ պահպանի դրանց առնչվող բոլոր տվյալներն ու Ընկերությանը մշտապես թույլատրի զննել դրանք: Ապահովագրվողը պետք է Ապահովագրության յուրաքանչյուր Շրջանի ավարտից հետո երեք ամսվա ընթացքում ներկայացնի տվյալներն Ընկերությանը, և այդ շրջանի համար ապահովագրական պարզև կհաշվարկվի համաձայն այդ տվյալների, և Ապահովագրվողի կողմից վճարված կամ նրան թույլատրված տարբերությունը՝ համաձայն դեպքի, կհաշվարկվի ըստ պահանջվող նվազագույն ապահովագրական պարզևի չափի:

Ընկերությունն իրավունք ունի Ապահովագրվողից պահանջելու նման հաշվարկներ պարունակող աուդիտորական հավաստագիր, որոնք կարգավորվում են համապատասխան այս պայմանագրի: Նման հաշվարկը պետք է ընդգրկի աշխատակիցներին վճարված բոլոր պարգևատրումները և ոչ վարձու աշխատողներին կամ միայն աշխատանքի բաժնի աշխատակիցներին, ենթակապալառուներին, ում համար կրվում է պատասխանատվություն, կամ նման այլ հիմքով՝ ըստ համաձայնության, տրված վճարումները:

ՀԱՅՑԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Պատասխանատվության ենթակա պայման է հանդիսանում այն, որ Ապահովագրվողը պարտավոր է ողջամտության սահմաններում որքան հնարավոր է շուտ Ընկերությանը գրավոր զեկուցել ցանկացած իրադեպի մասին, որը կարող է հիմք դառնալ այս Պայմանագրով սահմանված հայցի ծագման համար, և պարտավոր է ներկայացնել բոլոր հավելյալ տեղեկությունները, որոնք կպահանջի Ընկերությունը: Բոլոր հայցերի ծանուցագրերը կամ ընթացքի վերաբերյալ գրավոր տեղեկություններն ու այլ փաստաթղթերը ձեռքբերումից անմիջապես հետո պետք է ուղարկվեն Ընկերությանը: Ընդունման առաջարկի խոստում կամ վճարում տեղի չի ունենա և չի տրվի Ապահովագրվողի կողմից կամ անունից՝ առանց Ընկերության գրավոր համաձայնագրի, ով լիազորված կլինի ընդունել և գործել Ապահովագրվողի անունից որևէ հայցի դեմ պաշտպանություն կազմակերպելու կամ հայցի հաստատման հետ կապված, կամ գործել Ապահովագրվողի անունից՝ պատասխանատվության կամ վնասի կամ որևէ այլ պատճառով որևէ հայցում իր սեփական շահույթի հարցերով և կունենա ցանկացած հայցի հաստատման և ցանկացած ընթացակարգում մասնակցելու լիակատար իրավասություն, և Ապահովագրվողը կտրամադրի նման ամբողջ ինֆորմացիան, որն Ընկերությունը կպահանջի ողջամտորեն:

ՌԻՍԿԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

Պատասխանատվության ենթակա պայման է հանդիսանում այն, որ Ապահովագրվողը պետք է Ընկերությանը տեղեկացնի ռիսկի փոփոխությունների կամ որևէ էական փաստի մասին, որոնք նրան հայտնի կդառնան կամ կծագեն այս պայմանագրի գործողության ժամկետում:

ԱՅԼ ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եթե այս ապահովագրությամբ ծածկված որևէ հայց ամբողջովին կամ մասնակիորեն ծածկվում է այլ ապահովագրության կողմից, Ընկերության պատասխանատվությունը կգերակշռի և ոչ թե կհամատեղվի նման այլ ապահովագրության հետ:

ԿԵՂԾ ՀԱՅՑ

Եթե Ապահովագրվողը կունենա որևէ հայց և կիմանա, որ այն կեղծ է կամ խեղաթյուրված՝ գումարի չափի կամ որևէ այլ առումով, այս Ապահովագրությունը կդառնա անգործադրելի, և հետագա բոլոր հայցերը կմերժվեն:

ԿԱՍԵՑՄԱՆ ԴՐՈՒՅԹ

Ընկերությունը կարող է կասեցնել այս Ապահովագրությունը՝ 30 օր առաջ Ապահովագրվողի վերջին հայտնի հասցեով գրավոր ծանուցում ներկայացնելու դեպքում, ինչից հետո Ապահովագրվողին կտրամադրվի ապահովագրական պարգևի համամասնական բաժնի վերադարձ:

ԱՆՀԱՍԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Այս Պայմանագրում ներառված և Ապահովագրվողի և Ընկերության կողմից հասկացված և համաձայնեցված բոլոր Դրույթների, Պայմանների, Սահմանափակումների կամ

Բացառությունների մեկնարանության հարցում ցանկացած անհամաձայնություն կլուծվի համաձայն օրենքի: Յուրաքանչյուր կողմ համաձայնվում է ենթարկվել Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ցանկացած դատարանի արդարադատությանը: Դրա հետևանքով ծագող բոլոր հանգամանքները կպայմանավորվեն օրենքով և տվյալ դատարանի գործառնությամբ: